ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N ՄԿ/295-2019 ք. Արտաշատ

„12" 12 2019թ.

ՎԻՐԱԲ ՀԱՅՐԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով և 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 10.10.2019 թվականի N ՄՈ/152-2019 որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից «Հովտաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2019 թվականի նոյեմբերի 18-ից 20-ը կատարած ուսումնասիրության արդյունքում կազմված տեղեկանքը, պարզելով, որ «Հովտաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վիրաբ Հայրիկի Հովհաննիսյանը աշխատանքային պարտականությունները կատարել է ոչ պատշաճ, մասնավորապես՝ թույլ է տվել աշխատանքային խմբի կողմից «Հովտաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2019 թվականի նոյեմբերի 18-ից 20-ը կատարած ուսումնասիրության արդյունքում կազմված տեղեկանքում նշված խախտումները, բացառությամբ նշված տեղեկանքի 8-րդ կետում նշված խախտման, ինչով խախտվել են նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ մասի, 18-րդ մասի 5-րդ կետի, «Հովտաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 48-րդ կետի 1-ին, 5-րդ, 7-8-րդ, 10-րդ, 17-րդ, 76-րդ ենթակետերի պահանջները՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

«Հովտաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վիրաբ Հովհաննիսյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

12.12.2019

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN GARIK 2811870695 **Գ. ՍԱՐԳՍՅԱՆ**